



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11

Էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 003

« 15 » Մարտի 2015թ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

Փետրվարի 29-ին Սոթքի համայնքապետարանում տեղի է ունեցել Սոթք գետի ավազանի միջին հոսանքի ոսկերեք ցրոնների հանքերևակման տարածքում 2016-2018թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված տեղամասի ընդլայնման նախնական գնահատման հայտի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկումը:

Հիմք ընդունելով ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրիը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որպես պատասխանատու մարմին՝ խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն.

1. Հանրային քննարկման արդյունքների մասին՝ ընդունվել է, թե մերժվել նախագիծը /արձանագրությունը, մասնակիցները/, և եթե մերժվել է, նաև մերժման հիմքերի մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան